ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 1998 թվականի N 52
քաղ. Երևան

Սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի սակագների մասին

Ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և 20-րդ հոդվածի ա) կետով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել 1999թ. հունվարի 1-ից սպառողներին առաքվող էլեկտրաէներգիայի հետևյալ սակագները, ներառյալ ավելացված արժեքի հարկը.

   ա) 35 կՎ բարձր լարման բջիջներով սնվող սպառողներին՝ 16 դրամ/կՎտժ

   բ) 6(10) կՎ լարման ուղիղ բջիջներով սնվող սպառողներին՝ 20 դրամ/կՎտժ

   գ) 6(10) կՎ լարման ոչ ուղիղ բջիջներով սնվող սպառողներին՝ 25դրամ/կՎտժ

   դ) 0,38 կՎ լարման ցանցերից սնվող սպառողներին՝ 25 դրամ/կՎտժ, այդ թվում՝ բնակչությանը (անկախ մեկ բաժանորդի էլեկտրաէներգիայի սպառման ծավալից)՝ 25 դրամ/կՎտժ

2. Սահմանել 6(10) կՎ և բարձր լարման ցանցից սնվող սպառողներին (համապատասխան հաշվառքի սարքի առկայության պայմաններում) ժամը 23^{00} - 7^{00} էլեկտրաէներգիայի սպառման համար գիշերային զեղչ սակագին, ներառյալ ավելացված արժեքի հարկը՝ - 12 դրամ/կՎտժ:
3. 1999թ. հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1997թ. օգոստոսի 1-ի N6 որոշման 1-ին կետի է), ը), թ) ենթակետերը և 4-րդ կետը:
4. 1999թ. հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 1997թ. օգոստոսի 22-ի N10 որոշումը:

ՀՀ էներգետիկայի

հանձնաժողովի նախագահ՝ ***Վ.Մովսեսյան***